
Էրիխ Մարիա Ռեմարկ
Erich Maria Remarque

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ
ՆՈՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ
IM WESTEN NICHTS NEUES

*Գերմաներենից թարգմանեց Վանուհի Բաղմանյանը
Die Übersetzung aus dem Deutschen von Vanuhi Bachmanyán*



Երևան 2018

ՀՏԴ 821.112.2-31 Ռեմարկ
ԳՄԴ 84(4Գերմ)-44
Ռ-310

Էրիխ Մարիա Ռեմարկ

Մ 403 Արևմտյան ճակատում նորություն չկա/ Էրիխ Մարիա Ռեմարկ-
Եր.: Էդիթ պրինտ, 2018.- 224 էջ:

Գերմանացի աշխարհաստիչական գրող Էրիխ Մարիա Ռեմարկի «Արևմտյան ճակատում նորություն չկա» գիրքը լոյս է տեսնել 1929 թվականին: Այն պատերազմի մասին պատմող երրեք արեղծված ամենավաճառված գրքերից է, որը, ի դեպ, նաեղխարական Գերմանիայում արգելված գրականության ցանկում է եղել: Արեղծագործության հերոսները գերմանացի զինվորներն են, զործողությունները ծավալվում են Առաջին համաշխարհային պատերազմի փարիսերին:

Գրքում ակննադրեսի սուր աչքով ներկայացված են պատերազմող զինվորների ապրումները, նրանց կյանքը, հոգևիժնակը, մտքերը:

Պատերազմական զործողությունների ահազարհուր պարկերներից և հեփանքներից այն կողմ սովորական մարդիկ են, ովանք դեռ բոլորովին երևիա՛ իրենց վախերով, երազանքներով: Մակայն պատերազմը ժամանակից շուր հասունացնում է նրանց:

Գրքի արծանիքներից մեկն այն է, որ հեղինակը պատերազմին զուգահեռ ներկայացնում է մարդկանց, որոնք չեն կորցնում իրենց մաքուր էությունը, իրական ընկերների, որոնք պարրասպ են միմյանց համար իրենց կյանքը զոհել, որոնք պատասպում են միմյանց ցավով, հրձվում՝ ուրախսպամբ: Ընկերների, ընտանիքի նկարմամբ սերը ոչ մի պատերազմ չի կարող թթագնել այս մարդկանց սրտում:

«Արևմտյան ճակատում նորություն չկա» գիրքը, թերևս, ոչ թե պատերազմի մասին է, այլ մարդու, որը կամա-ակամա հայտնվել է իրադարձությունների խառնակ կենտրոնում: Այն աչքի է ընկնում յուրահատուկ գեղարվեստականությամբ, պարկերների բազմազանությամբ, կարողանում է փայ Առաջին աշխարհամարդի փարիներին մարդկող զինվորների իրական հոգևիժնակը, շոշափելի դարձնում պատերազմի գարկերակը:

ՀՏԴ 821.112.2-31 Ռեմարկ
ԳՄԴ 84(4Գերմ)-44

ISBN 978-9939-75-255-6

© Էդիթ պրինտ, 2018

© 1937 by New York University, successor-in-interest to the literary rights
of The Estate of the Late Paulette Goddard Remarque

Ռազմաճակատից ինը կիլոմետր այս կողմ ենք: Երեկ հանձնեցինք հերթափոխը, իսկ այսօր ստամոքսներս լցրել ենք սպիտակ լոբով ու տավարի մսով, ուստի կուշտ ու գոհ ենք: Երեկոյի համար էլ մի-մի լիքը աման հաջողեցրինք, հետո էլ՝ կրկնակի բաժին հաց ու երշիկ: Այ սա կշտացնում է: Նման դեպք վաղուց չէր եղել: Դաշտային խոհանոցի՝ լո-լիկի պես կարմիր դեմքով խոհարարն անձամբ է ուտելիքը փոխանցում մոտեցողներին, շերեփով կանչում ու մի-մի մեծ բաժին լցնում է ամանները: Նա բոլորովին կորցրել է իրեն, որովհետև չգիտի՝ ինչպես դատարկել գուլաշի կաթսան: Թյաղենն ու Մյուլերը լվացվելու մի քանի թաս են գտնում ու բերնեբերան լցնել տալիս՝ որպես պահեստային պաշար: Թյաղենը դա խժոեյու ցանկությունից է, անուժ, Մյուլերը՝ հեռատեսությունից: Որտեղ է Թյաղենն այդքանը տեղավորում, Աստված գիտի: Նույն վտիտ տառելիս է:

Ամենակարևորը, սակայն, այն է, որ մեզ կրկնակի բաժին ծխախոտ տվեցին: Ամեն մեկին՝ տասը սիգար, քսան ծխախոտ ու երկու կտոր ծամելու թուփուն, ինչ խոսք, խիստ պատշաճ է: Ես իմ ծամելու թուփունը փոխանակել եմ Քաթինսկու ծխախոտների հետ՝ այդպիսով ձեռք բերելով քառասուն ծխախոտ: Մեկ օրվա համար բավական է:

Ճիշտն ասած, նման նվիրատվություն նախատեսված չէր: Պրուսացիք այդքան առատաձեռն չեն: Պարզապես թյուրիմացություն էր:

Տասնչորս օր առաջ մենք պետք է առաջնագծում լինեինք, մեր հերթափոխն էր: Մեր հատվածում բավական խաղաղ էր, այդ պատճառով մեր հրամանատարը վերադարձի համար նորմալ սնունդ էր վերցրել՝ հոգալով վաշտի հարյուր հիսուն հոգու համար: Բայց վերջին օրը հրաձգությունն անսպասելի երկար տևեց, ռուսերն զցեցին, անգլիական հրետանին «թմրկահարեց» մեր դիրքերը, ուստի ծանր կորուստ-

ներ ունեցանք ու միայն ութսուն հոգով վերադարձանք:

Գիշերը մեզ փոխարինեցին, ու մենք իսկույն պատկեցինք՝ քուններս կարգին առնելու, քանի որ Քաթժինսկին ճիշտ էր, երբ ասում էր. «Պատերազմն այնքան էլ վատ բան չէր լինի, եթե միայն մարդ կարողանար ավելի շատ քնել: Առաջնագծում, պարզ է, դա հնարավոր չէ: Բայց մյուս կողմից ամեն անգամ տասնչորս օրը շատ երկար ժամանակ է անքուն մնալու համար»:

Արդեն կեսօր էր, երբ մեզնից մի քանիսը դուրս սողացին քարաքներից: Կես ժամ անց բոլորս, ամաններս ձեռքներիս, հավաքվեցինք դաշտային խոհանոցում, որից ճարպոտ ու համեղ բույր էր տարածվում: Հերթի սկզբում, իհարկե, ամենաքաղցածներն են՝ փոքր Ալբերտ Քրոփը, որ մեզնից ամենապարզ մտածողն է և դրա շնորհիվ էլ եֆրեյտոր է, Մյուլլեր Հինգերորդը, որ դեռ դպրոցական դասագրքեր է հետը քարշ տալիս ու երազում ավարտական քննությունների մասին: Հրաձգության ժամերին անգամ ֆիզիկայի դասերն է անգիր սովորում: Լեերը, որ թավ մորուք ունի և մեծ սեր սպայական հասարակաց տների աղջիկների հանդեպ: Նա պնդում է, թե նրանք պիտի ենթարկվեն զորքին տրվող հրամաններին, մետաքսե վերնաշապիկներ կրեն և կապիտանի այցից առաջ լոգանք ընդունեն: Չորրորդը ես եմ՝ Պաուլ Բոյմերս: Չորսս էլ՝ տասնինը տարեկան, չորսս էլ՝ նույն դասարանից պատերազմ եկած:

Մեզնից հետո մեր ընկերներն են կանգնած՝ մեր հասակակից Թյադենը՝ վտիտ փականագործը, վաշտի շատակերը, ճաշի նստելիս նիհար է, ճաշելուց հետո կարծես հղի փայտոջիլ լինի, Հայն Վեսթհուզը՝ նույն տարիքի տորֆագործ բանվորը, որ ձեռքի մեջ շատ հանգիստ կարողանում է թաքցնել զինվորական սև հացը և ասել. «Գուշակնք՝ ինչ կա ձեռքիս մեջ», բանվոր Դեթերինզը, որ միայն իր ազարակի ու իր կնոջ մասին է մտածում, և վերջապես Ստանիսլաուս Քաթժինսկին՝ մեր խմբի գլխավորը՝ տոկուն, խորամանկ, փորձառու, քառասուն տարեկան տղամարդ՝ հողագույն դեմքով, կապույտ աչքերով, կախ ընկած ուսերով, մաքուր

օղի, համեղ ուտելիքի և լուրերի նկատմամբ հիանալի հո-
տառությամբ: Դաշտային խոհանոցի առջև ձգվող հերթի
ծայրին մեր վաշտն է: Մենք կորցրինք մեր համբերությունը,
որովհետև բանից անտեղյակ խոհարարը դեռ կանգնած
սպասում էր: Վերջապես Քաթժինակին նրան ձայն տվեց.

-Դե վերջապես բաց արա արգանակիդ խուփը, Հայնրիխ:
Ինչ է, չենք տեսնում, որ լորին արդեն պատրաստ է:

Խոհարարը քնաթաթախ օրորեց գլուխը.

-Նախ պետք է բոլորդ հավաքվեք:

Թյադենը քնծիծաղ տվեց.

-Բոլորս այստեղ ենք:

Ենթասպան դեռ գլխի չէր ընկնում.

-Այդպես, իհարկե, ձեր սրտով կլինի: Բայց մյուսները որ-
տեղ են:

-Նրանց կերակրելն այսօր քեզ վրա չէ: Դաշտային հի-
վանդանոց ու եղբայրական գերեզման:

Խոհարարը, դա լսելով, շանթահար եղավ: Օրորվեց:

-Իսկ ես հարյուր հիսուն հոգու համար եմ պատրաստել:

Քրուփը կատակով հարվածեց նրա կողին.

-Վերջապես կուշտ կուտենք: Դե, սկսեցինք:

Բայց հանկարծ Թյադենի գլխում մի միտք փայլատակեց:
Նրա սուր, մկան դեմքը նորից շողաց, աչքերը խորամանկո-
րեն նեղացան, այտերը ցնցվեցին, ու նա մոտեցավ.

-Լսիր, նշանակում է՝ համցն էլ հարյուր հիսուն հոգու հա-
մար ես նախատեսել:

Ենթասպան, շվարած ու թնաթափ, գլխով արեց: Թյադե-
նը բռնեց նրա շինելից:

-Երշիկն էլ:

Խոհարարը նորից տմբտմբացրեց լուխկի պես կարմիր
գլուխը:

Թյադենի ծնուոր դողաց.

-Թութո՞ւնն էլ:

-Այո՛, ամեն ինչը:

անցավ, որ այդ եղունգները կշարունակեն աճել նկուղային տիեզերական բույսերի պես, երբ Քեմերիխն արդեն շնչելիս չի լինի: Ու աչքիս առաջ հետևյալ պատկերն է. դրանք ծովում են խցանահանի պես, աճում են ու աճում, դրանց հետ նաև՝ քայքայված գանգի մագերը, ինչպես խոտը՝ պարարտ հողում, հենց խոտի պես. միթե դա հնարավոր է:

Մյուլերը խոնարհվում է:

-Մենք բերել ենք թո իրերը, Ֆրանց:

Քեմերիխը, ձեռքը պարզելով, ասում է.

-Դրե՛ք մահճակալիս տակ:

Մյուլերը դնում է: Քեմերիխը նորից է սկսում ժամացույցի մասին խոսել: Ինչպե՞ս հանգստացնել նրան՝ առանց կասկածի տեղիք տալու: Նորից հայտնվում է Մյուլերը՝ օդաչուական մի գույգ կոշիկ ձեռքին: Անգլիական հրաշալի, մինչև ծնկները հասնող ու մինչև վերջ թուղերով կապվող կոշիկներ են՝ փափուկ, դեղին կաշվից, մի պահանջված բան: Մյուլերը խիստ ոգևորված է դրանց տեսքից, ներբանները պահում է իր տձև կոշիկների ներբանների մոտ ու հարցնում.

-Կոշիկներդ տանելո՞ւ ես հետդ, Ֆրանց:

Երես էլ նույն բանն ենք մտածում. եթե անգամ առողջանա, դրանցից միայն մեկը կկարողանա կրել, ուրեմն պետք չեն նրան: Այս պարագայում ափսոս է դրանք թողնել այստեղ, որովհետև սանիտարներն իսկույն կթոցնեն, եթե նա մահանա:

Մյուլերը կրկնում է.

-Չն ուզում սրանք այստեղ թողնել:

Քեմերիխը չի ուզում: Դա իր ունեցած լավագույն բանն է:

-Ի վերջո կարող ենք փոխանակել,- նորից առաջարկում է Մյուլերը.- ճակատում սրանց կարիքը հաստատ կլինի:

Քեմերիխը, սակայն, անդրդվելի է:

Ես տրոբում եմ Մյուլերի ոտքը. գեղեցիկ կոշիկները վաճառումով նորից դնում է մահճակալի տակ:

Մի քիչ էլ գրուցում ու հրաժեշտ ենք տալիս:
-Քեզ լավ նայիր, Ֆրանց:
Ես նրան խոստանում եմ վաղը նորից այցելել: Մյուսները նույնպես այդ մասին է խոսում: Նա մտածում է քուղերով կոշիկների մասին ու դրա համար էլ ուզում է «դիրքերում» լինել:
-Քեներիխը տնքում է: Ջերմություն ունի: Դրսում մի սանիտարի ենք բռնում ու համոզում, որ սրսկի Քեներիխին:
Նա մերժում է:
-Այդքան շատ մորֆիում չկա, որ ամեն մեկին տանք:
-Դու, երևում է, միայն սպաներին ես ծառայում,- ատելությամբ ասում է Քրոփը:
Ինձ արագ գցում եմ նրանց մեջտեղը, նախ ծխախոտ եմ առաջարկում սանիտարին: Նա վերցնում է: Հետո հարցնում եմ.
-Բայց ընդհանրապես իրավունք ունեն ներարկում անելու:
Նա վիրավորվում է.
-Եթե չեք հավատում, ինչու եք խնդրում ներարկել:
Մի քանի ծխախոտ էլ եմ խցկում նրա ձեռքը:
-Լավություն արա մեզ:
-Դե լավ,- ասում է նա:
Քրոփը հետը ներս է գնում, չի վստահում և ուզում է իր աչքով տեսնել: Մենք սպասում ենք դրսում:
Մյուսները նորից իր ճուղակոշիկներն է հիշում.
-Դրանք ինձ այնքան կսազենին: Թե չէ այս գոնդոլների մեջ ոտքերիս բշտիկը բշտիկի վրա է աճում: Կարծում ես՝ կձգի մինչև վաղը՝ գոնե մինչև մեր հերթապահության ավարտը: Եթե գիշերը մեռնի, այդ կոշիկներն այլևս չենք տեսնի:
Արերտը վերադառնում է.
-Գնացի՛նք,- հարցնում է նա:
-Վերջացրի՛նք,- ամփոփում է Մյուսները: